ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«27» 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000114

Ձեռնարկողը՝ **«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ**
ք. Երևան, Հալաբյան փ. 11/36

Գործունեությունը՝ ***Մասիսի բժշկական կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000114

<27> 11 2020թ.

Մասիսի բժշկական կենտրոնի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Նորաշեն» ՆՏ ԱԿ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Արարատի մարզ, Մասիս քաղաք

Մասիսի բժշկական կենտրոնի վերակառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Հերացի 1 փողոց հասցեում «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի կողմից: Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 4.87հա մակերեսով հողամասի վրա: Հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման է:

Նկարագրական մաս

Վերակառուցման ենթակա տարածքը կառուցապատված է, առկա է կանաչ գոտի, ծառեր և թփեր: Նախագծված ԲԿ-ն բաղկացած է երկու եռահարկ և մեկ երկհարկանի մասնաշենքերից և օժանդակ կառույցներից, մասնավորապես՝ կենտրոնական ախտահանման, լվացքատան, ներհիվանդանոցային դեղատան և ինժեներատեխնիկական սենքերից, կաթսայատնից և շտապօգնության կայանից, ինչպես նաև հատակագծում հաշվի են առնված ավտոկայանատեղիներ, անցուղիներ, ճեմուղիներ և կանաչապատ գոտիներ:

ԲԿ-ն կունենա 55 մահճակալային հզորություն և կգործեն հետևյալ բաժանմունքները.

- շտապ բուժօգնության կայան՝ 1 հերթապահ բրիգադի հաշվարկով
- ինտենսիվ թերապիայի բաժանմունք (5 մահճակալ)
- անհետաձգելի բուժօգնության ծառայություն (3 մահճակալ)
- արյան պահպանման սենյակ
- օժանդակ ծառայությունների սենքեր, այդ թվում՝ կենտրոնական ախտահանում, լվացքատուն, ներհիվանդանոցային դեղատուն և ինժեներատեխնիկական սենք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

55 ստացիոնար մահճակալ ունեցող հիվանդանոցային ծառայություններում առկա են՝ վիրաբուժական (5 մահճակալ), մանկաբարձագինեկոլոգիական (12 մահճակալ), մեծահասակների թերապևտիկ ու մանկաբուժական (30 մահճակալ), ինֆեկցիոն մեկուսարան (8 մահճակալ):

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի ընդհանուր մակերես – 48 700մ² (4.87հա),

ընդհանուր կառուցման աշխատանքների մակերեսը - 21 943մ²,

կառուցապատման մակերես – 2461մ²,

բարեկարգման մակերես – 11980մ²,

կանաչապատման մակերես – 7502մ²:

Տեղանքում կատարված դենդրոլոգիական ուսումնասիրությունների համաձայն՝ առկա բուսականության մոտ 30%-ը գնահատվել է չորացած կամ չորացման եզրին, իսկ սանիտարական վիճակի տեսանկյունից՝ հասուն ծառերի մոտ դիտվել է բնափայտի փտում: Բնութագրվող ծառերի մեծ մասը նախկինում տնկվել է շենքերի հարևանությամբ (մոտ 1-2 մ) և ներկայումս խոշոր չափերի պատճառով կպած են շինությունների պատերին կամ սերտաճած են հիմքերի հետ: Շինություններին անմիջապես մոտ գտնվող փտած և վնասված ծառերը փոխարինվելու են էկոլոգիական, գեղագիտական և կանաչապատման տեսանկյունից ավելի արժեքավոր բուսատեսակներով, իսկ աշխատանքներին խանգարող ավելի երիտասարդ (3-4 տարեկան) ծառերը վերատնկվելու են:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

Բժշկական կենտրոնի ջրամատակարարման, ջրահեռացման գործընթացը կկազմակերպի «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն:

Նախագծող ԲԿ-ի գազաֆիկացման գործընթացը կկազմակերպվի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն:

Էլեկտրասնուցման գործընթացը, համաձայն «Հայաստանի էլեկտական ցանցեր» ՓԲԸ-ի տրամադրված տեխնիկական պայմանների:

Նախագծվող ԲԿ-ի ջեռուցումը կիրականացվի նոր կաթսայատան միջոցով, որը հատակագծում տեղակայված է կենտրոնի գործող կաթսայատան շենքի հարևանությամբ: Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային վեց կաթսաների (գոյություն ունեցող կաթսայատան 4 կաթսաները նախատեսվում են վերատեղադրել) միջոցով բնական գազի այրմամբ: Նախագծվող ԲԿ-ում կաթսայատան հարևանությամբ նախատեսվում է նաև հեղուկ վառելիքի պահեստարան: Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսաների և ջերմային ցանցերի միանվագ լցման համար: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է, քանի որ կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 30 ամիս: Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր հիմնականում շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (35 մարդ) և կազմել 639.1մ³/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 10929մ³/շին.ժամ:

Շինարարության ժամանակ կատարվելու է մոտ 2700մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որն ամբողջությամբ կօգտագործվի հետլիցքի նպատակով և հողային բարեկարգման աշխատանքներում:

Գործունեության ընթացքում (ապամոնտաժման աշխատանքներ) կգոյանա շուրջ 3250տ շինաղբ, որը կտեղափոխվի 13 կմ հեռավորության վրա գտնվող Մասիսի համայնքային աղբավայր:

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, լուսավորության ապահովում և այլն,
- կիրականացվի ազդեցության ենթակա բուսահողի մերկացում/հեռացում և ժամանակավոր պահպանում հետագայում օգտագործման նպատակով,
- շինարական աղբի կանոնավոր հեռացում և պահում համայնքապետարանի տրամադրած տեղեկանքի համաձայն,
- հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար նախատեսված տարաներ և այնուհետև աղբը կհեռացվի հասարակական աղբաման,
-շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում, ինչպես նաև կիրականցվեն մեքենաների անիվների լվացման/մաքրման միջոցառումներ,
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
-աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին՝ 09:00-18:00,
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականցվի լիցենզավորված մատակարարից, վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե/ մետաղական կամ ավազե հիմքերի վրա,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը կոնտակտային տվյալները պաստառների ձևով կփակցրվեն հրապարակում,
- կիրականացվի ապամոնտաժվող շենքի ամրակալում՝ բացառելու համար շենքի փլուզման հետ կապված ռիսկերը
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում,
- կիրկանացվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, դիմակներով և այլն,
- տարածքում կիրականացվեն հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Ծրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) հաշվարկվում է 4 653.16 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է առողջապահության նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն: Արտակարգ

իրավիճակների նախարարությունը, պաշտպանության նախարարությունը: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Մասիս համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացման վերաբերյալ, որը հանրության կողմից արժանացել է հավանության:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Մասիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը, շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի N12-Ն հրամանի պահանջների:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Վ. Ռաիսյան